

«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի
12.01.2012թ. թիվ 1/01ԱԳ-Ա որոշմամբ «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի նկատմամբ
կիրառվել է պատասխանատվության միջոց՝ ապահովագրական ընկերությունների
գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման
համար:

12.01.2012թ.
Երևան

Թիվ 1/01ԱԳ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՈՐՈՇՈՒՄ

«ՆԱԽՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սույն որոշման նկարագրական մասի 1-ին և 2-րդ կետերում նկարագրված խախտումները թույլ տալու համար «Նախրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ կիրառել նախազգուշացում՝ ապագայում նմանատիպ խախտումներ չկրկնելու հանձնարարականով:
2. Սույն որոշման նկարագրական մասի 4-րդ կետում նկարագրված խախտումը թույլ տալու համար «Նախրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ կիրառել տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
3. Կարճել 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 4/8 արձանագրության 3-րդ կետով սկսված վարույթը՝ արձանագրված փաստը խախտում չլինելու հիմքով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «Նախրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն մուտքագրվելու կամ վերջինիս՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ